ՌԱՖԻԿ ԱՇՈՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ծննդյան 80-ամյակի առթիվ)

Բոլորեց ֆիզիոլոգիական գիտության նվիրյալներից մեկի՝ ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի լավագույն գիտնականներից մեկի՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Ռաֆիկ Աշոտի Հարությունյանի կյանքի 80, գիտամանկավարժական գործունեության 53 տարին:

Ռ.Ա. Հարությունյանը ծնվել է Երևան քաղաքում 1930 թվականի նոյեմբերի 28-ին: 1954 թվականին ավարտել է Երևանի Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը, աշխատանքի է անցել Էջմիածնի շրջանում:

1957 թվականից մինչև օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1987 թվականին՝ դոկտորական ատենախոսություն:

Ռ.Ա. Հարությունյանը ծավալուն գիտական աշխատանք է կատարել կենդանիների ջերմակարգավորման ֆիզիոլոգիայի բնագավառում: Նրա գիտական աշխատությունները, որոնք մեծ ճանաչման են արժանացել մասնագետների կողմից, նվիրված են գյուղատնտեսական թռչունների (հավերի) մթերատվության և օրգանիզմի ջերմակարգավորման ու արյան շնչական ֆունկցիաների վրա միջավայրի ջերմության ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությանը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների ջերմակարգավորման հորմոնային, միջնորդանյութային և պեպտիդային մեխանիզմների բացահայտմանը և այդ մեխանիզմներում սիմպատիկ նյարդային համակարգի տարբեր բաժինների նորադրեներգիկ ընկալիչների դերի ուսումնասիրությանը:

Այս աշխատանքների գիտական և գիտապրակտիկ կարևոր նշանակություն ունեցող արդյունքներն ամփոփվել են Ռ.Ա. Հարությունյանի 70—ից ավելի գիտական աշխատանքներում, հանրապետական և միջազգային հանդեսներում, զեկուցվել ու հրատարակվել համագումարների, սիմպոզիումների, գիտաժողովների ժողովածուներում և ամփոփվել նրա դոկտորական ատենախոսության մեջ:

Դոկտորական ատենախոսության պաշտպանությունից հետո շարունակվել են Ռ.Ա. Հարությունյանի գիտական հետազոտությունները, նվիրված ջերմակարգավորման նյարդաքիմիական մեխանիզմների ուսումնասիրությանը: Նա ուսումնասիրել է հիստամինի, նյարդապեպտիդ ,Բե(ի, լեյցին-էնկեֆալինի, օքսիթոցինի, սոմատոստատինի, թիմոպոետինի, անգիոտեն-զինի ազդեցությունը օրգանիզմի ջերմային հոմեոստազի կարգավորման ֆիզիկական և քիմիական մեխանիզմների վրա: Միաժամանակ ապացուցվել է, որ ինչպես ,Կորիդելե ցեղատեսակի ոչխարների, այնպես էլ հայկական մուֆլոն ցեղատեսակի ոչխարների տրամախաչումից ստացված խառնածինների մոտ մարմնի ,թաղանթիե տարբեր հատվածներ տարբեր չափով են մասնակցում օրգանիզմից ջերմարձակման գործընթացին:

Ռ.Ա. Հարությունյանի բազմաթիվ գիտական հոդվածներ նվիրված են ջերմակարգավորման մեխանիզմների վրա թույների (մեղվի, օձի) և ստրեսային գործոնների ազդեցությանը:

Ռ.Ա. Հարությունյանի գիտական հետազոտությունների և գիտակազմակերպչական աշխատանքների արդյունքներն ամփոփված են նրա 181 գիտական և 23 գիտահանրամատչելի հոդվածներում:

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց Ռ.Ա. Հարությունյանը կատարել է մեծածավալ գիտակազմակերպչական աշխատանք: Նա Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական խորհրդի, ,Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիաե մասնագիտացված գիտական խորհրդի, ,Ուղեղի հետազոտության Միջազգային կազմակերպության՝ ԻԲՐՈ ասոցիացիայի անդամ է:

Նա եղել է անդամ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիական բաժանմունքի ,Ջերմակարգավորման ֆիզիոլոգիական մեխանիզմներրե խորհրդի անդամ, իսկ ներկայումս անդամ է ,Ուրարտուե համալսարանի գիտական խորհրդի, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի: Ռ.Ա. Հարությունյանը 1997 թվականին Ամերիկայի Կենսագրական ինստիտուտի կողմից ճանաչվել է ,Տարվա մարդե:

Ռ.Ա. Հարությունյանը մեծ ավանդ ունի հանրապետությունում երիտասարդ մանկավարժների պատրաստման գործում: Շուրջ 17 տարի նա մանկավարժական գործունեություն է ծավալում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում: Իրեն բնորոշ համեստությամբ և գործին նվիրվածությամբ նա դարձել է մասնաճյուղի ուսանողության և կոլեկտիվի հարգարժան ընկերն ու սիրված մարդը:

Կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի, գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար 2004 թվականին Ռ.Ա. Հարությունյանը պարգևատրվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով:

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա.Օրբելու
անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ